# Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր | Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ | Ֆյուչերսներ



**Բարձրանում ենք միասին**

15 Հունիս 2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

# Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:

Նավթի գները արձանագրեցին բացասական եկամտաբերություն:

Բոլոր ոլորտները արձանագրեցին դրական եկամտաբերություն:




ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են:

Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 0.57%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 2.31%-ով






# Ինդեքսներ

Նախորդ շաբաթ Dow Jones-ը աճեց 0.66% -ով

Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 4.01%-ով



# Ինդեքսներ

S&P 500 և Dow Jones Industrial Average ինդեքսները շաբաթն ավարտեցին համեստ աճով, մինչդեռ Nasdaq-ը բարձրացավ մոտ 2%-ով, իսկ Russell 2000-ը գրանցեց ավելի քան 4% աճ:

# Բաժնետոմսեր | Փառահեղ յոթնյակ

«Փառահեղ յոթնյակի» բաժնետոմսերը նախորդ շաբաթ զգալիորեն հետ մնաց S&P 493-ից:

Նախորդ շաբաթ S&P 500-ի բոլոր հիմնական ոլորտները գրանցեցին դրական եկամտաբերություն, ինչը վկայում է շուկայական աճի լայն ընդգրկվածության և ներդրողների բարելավված տրամադրությունների մասին:



# Բաժնետոմսեր | Կիսահաղորդիչներ | Ծրագրային ապահովում

Կիսահաղորդիչների զամբյուղը ուժեղ աճ գրանցեց՝ ամբողջությամբ վերականգնելով նախորդ շաբաթվա կորուստները:

Ծրագրային ապահովման բաժնետոմսերի զամբյուղը նախորդ շաբաթ նվազեց ավելի քան 13%-ով:






# Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Oracle-ը (ORCL) հայտնել է, որ 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է մոտ 14.9 միլիարդ դոլարի հասույթ, ինչը տարեկան 12%-ով ավելի է, ինչը պայմանավորված է ամպային ենթակառուցվածքների մեծ պահանջարկով: Ամպային ենթակառուցվածքներից եկամուտն աճել է 28%-ով՝ հասնելով 7.2 միլիարդ դոլարի, գործառնական շահույթը կազմել է մոտ 4.3 միլիարդ դոլար, ինչը արտացոլում է արհեստական բանականության և ամպային հատվածում շարունակական աճը:

Adobe-ը (ADBE) 2026 թվականի առաջին եռամսյակում արձանագրել է ռեկորդային՝ 6.4 միլիարդ դոլարի հասույթ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածից 12%-ով ավելի է, ինչը պայմանավորված է Creative Cloud, Document Cloud և AI լուծումներով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը աճել է 19%-ով՝ հասնելով 6.06 դոլարի, գործառնական դրամական հոսքը հասել է ռեկորդային 3.0 միլիարդ դոլարի, իսկ AI-ի հիմնվածը նախորդ տարվա համեմատ ավելի քան եռապատկվել է, ինչը վկայում է AI արտադրանքի լայնածավալ ներդրման մասին:

# Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Lennar-ի (LEN) հասույթը 2026 թվականի առաջին եռամսյակում կազմել է մոտ 6.6 միլիարդ դոլար, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 13%-ով, քանի որ բնակարանների բարձր գները հետ կապված խնդիրները և հիփոթեքային վարկերի բարձր տոկոսադրույքները ճնշում են բնակարանաշինությունը: Զուտ շահույթը նվազել է մինչև 229 միլիոն դոլարի, մինչդեռ EBIT-ը կազմել է մոտ 340 միլիոն դոլար, ինչը արտացոլում է բնակարանների կառուցման ցածր մակարդակը:

Casey's General Stores (CASY) ընկերությունը 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է մոտ 4.6 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան 11.5%-ով ավելի է, ինչը պայմանավորված է վառելիքի ծավալների, պատրաստի սննդի վաճառքի և ապրանքների վաճառքի աճով: EBITDA-ն աճել է 19.8%-ով՝ հասնելով 414 միլիոն դոլարի, մինչդեռ զուտ շահույթը աճել է 19.5%-ով՝ հասնելով 215 միլիոն դոլարի, ինչը արտացոլում է եղած խանութների վաճառքի ուժեղ ցուցանիշները և նոր ձեռք բերված խանութների հաջող ինտեգրումը:

# Տոկոսադրույքի սպասումներ | Պարտատոմսերի շուկա

Նախորդ շաբաթ հրապարակված գնաճային տվյալները և նավթի գների անկումը նպաստեցին ԴՊՀ-ի կողմից տոկոսադրույքների բարձրացման սպասումների անկմանը՝ չեզոքացնելով հունիսի 8-ի կտրուկ աճը:

ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են (գները բարձրացան): Պատճառը տոկոսադրույքների սպասումներում տրարադրությունների փոփոխությունն էր:



# Պարտատոմսերի շուկա | Դոլարի ինդեքս | Սպոտ ոսկի

ԱՄՆ դոլարն արձանագրեց մայիսի սկզբից ի վեր իր ամենաթույլ շաբաթը՝ կորցնելով աշխատաշուկայի ուժեղ տվյալների հրապարակումից հետո գրանցած աճի գրեթե կեսը:

Չնայած դոլարի թուլացմանը, ոսկին նույնպես նվազեց՝ շաբաթը փակելով 2025 թվականի նոյեմբերից ի վեր ամենացածր մակարդակում:

Մետաղների շուկայում դրական դինամիկա ցուցաբերեց պղինձը՝ շաբաթվա ընթացքում աճելով ավելի քան 3%-ով, ինչը վկայում է արդյունաբերական պահանջարկի բարելավման և շուկայի ռիսկային ախորժակի աճի մասին:

# Ֆյուչերսներ | Նավթ

Նավթի գները վերջին չորս շաբաթներից երեքում նվազել են, սակայն շարունակում են մնալ բարձր՝ նախապատերազմյան մակարդակներց:



# Կրիպտոարժույթներ

Բիթքոինը շաբաթը փակեց փոքր, բայց դրական եկամտաբերությամբ:

# Հետաքրքիր փաստեր

Արհեստական բանականության աճը խթանում է տեխնոլոգիական ընկերությունների ռեկորդային վարկավորումը

Alphabet-ը (GOOGL), Amazon-ը (AMZN), Meta-ն (META), Microsoft-ը (MSFT) և Oracle-ը (ORCL) 2026 թվականին թողարկել են ռեկորդային 159 միլիարդ դոլարի կորպորատիվ պարտատոմսեր: Սա արդեն գերազանցում է 2025 թվականի ամբողջ տարվա ծավալը 47%-ով կամ 51 միլիարդ դոլարով: Համեմատության համար նշենք, որ 2020-2024 թվականների ընթացքում այս ընկերությունները թողարկել են մոտ 150 միլիարդ դոլարի պարտք: Միայն Oracle-ը 2025 թվականի սեպտեմբերից ի վեր թողարկել է 43 միլիարդ դոլարի պարտատոմս: Morgan Stanley-ն կանխատեսում է, որ 2026 թվականին AI-ի հետ կապված համաշխարհային պարտքի թողարկումը կրկնապատկվի՝ հասնելով ռեկորդային 570 միլիարդ դոլարի:



# Հետաքրքիր փաստեր

SpaceX-ը (SPCX) ներկայումս ԱՄՆ-ի 6-րդ խոշորագույն ընկերությունն է՝ 2.3 տրիլիոն դոլար շուկայական կապիտալիզացիայով:
Այժմ կան ռեկորդային 12 ամերիկյան հրապարակային ընկերություններ, որոնց շուկայական կապիտալիզացիան գերազանցում է 1 տրիլիոն դոլարը:
SpaceX-ը 3 տարի առաջ գնահատվում էր 137 միլիարդ դոլար, 5 տարի առաջ՝ 74 միլիարդ դոլար, իսկ 10 տարի առաջ՝ 10 միլիարդ դոլար:



# Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում արդեն երրորդ ամիսն անընդմեջ արհեստական բանականությունը համարվում է աշխատատեղերի կրճատման հիմնական պատճառ: 2026 թվականին AI-ի ներդրման արդյունքում կրճատվել է շուրջ 88,000 աշխատատեղ, ինչը 60%-ով ավելի է 2025 թվականի նույն ցուցանիշից: Ընկերությունները շարունակաբար ընդլայնում են AI-ի կիրառությունը՝ ավտոմատացնելով տարբեր գործընթացներ և նվազեցնելով աշխատուժի պահանջարկը, հատկապես վարչական, հաճախորդների սպասարկման և տվյալների մշակման ոլորտներում:



**ԱՄՆ-ում բնակելի անշարժ գույքի գները շարունակում են նվազել**

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ-ում բնակելի անշարժ գույքի միջին գները նվազել են 2.4%-ով՝ հասնելով 429,500 դոլարի, ինչը 2017 թվականից ի վեր ամենամեծ անկումն է: Գների ճնշումը տարածվել է 50 խոշոր քաղաքներից 35-ի վրա, առավելապես Մեմֆիսում 13%, Բուֆալոյում 11.6% և Օսթինում 9.5%: Շուկայի թուլացումը պայմանավորված է բարձր հիփոթեքային տոկոսադրույքներով և պահանջարկի նվազումով:

# Հետաքրքիր փաստեր

**Սուպերտանկերների պատվերները հասել են ռեկորդային մակարդակի**

Աշխարհի նավաշինարաններում սուպերտանկերների պատվերները հասել են ռեկորդային 262 նավի, ինչը պատմական բարձր ցուցանիշ է և գերազանցում է 2008 թվականին գրանցված նախորդ ռեկորդը՝ 255 նավ: Սա ավելի քան 1000% աճ է երկու տարվա ընթացքում: Յուրաքանչյուր նավ կարող է տեղափոխել մինչև 2 միլիոն բարել հում նավթ: Պատվերների այս աճը տեղի է ունենում մատակարարման շղթայի խափանումների և նավթի փոխադրման բարձր պահանջարկի ֆոնին, սակայն նախկին փորձը ցույց է տալիս, որ նման ընդլայնումները կարող են հետագայում ճնշում գործադրել սակագների վրա:



# Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ կառավարությունը մայիսին ստացել է 336 միլիարդ դոլար եկամուտ, իսկ ծախսել է 628 միլիարդ դոլար՝ արձանագրելով զգալի բյուջետային դեֆիցիտ:



# Կորպորատիվ հաշվետվությունների ցանկ

Այս շաբաթ 20 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի առաջին եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են The Progressive Corporation (PGR), Accenture (ACN), The Kroger (KR), Quantum (QMCO), CarMax (KMX) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

| No. | Ticker | Company | Sector | Industry | Country | Market Cap | P/E | Price |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | PGR | Progressive Corp | Financial | Insurance - Property & Casualty | USA | 119.32B | 10.38 | 204.20 |
| 2 | ACN | Accenture plc | Technology | Information Technology Services | Ireland | 104.68B | 13.97 | 170.50 |
| 3 | KR | Kroger Co | Consumer Defensive | Grocery Stores | USA | 39.74B | 41.68 | 64.46 |
| 4 | JBL | Jabil Inc | Technology | Electronic Components | USA | 37.17B | 47.22 | 352.36 |
| 5 | KMX | Carmax Inc | Consumer Cyclical | Auto & Truck Dealerships | USA | 6.88B | 30.46 | 48.50 |
| 6 | WLY | John Wiley & Sons Inc | Communication Services | Publishing | USA | 2.27B | 15.47 | 44.39 |
| 7 | LZB | La-Z-Boy Inc | Consumer Cyclical | Furnishings, Fixtures & Appliances | USA | 1.53B | 18.54 | 37.36 |
| 8 | SB | Safe Bulkers Inc | Industrials | Marine Shipping | Monaco | 672.77M | 22.13 | 6.58 |
| 9 | AIOT | PowerFleet Inc | Technology | Software - Infrastructure | USA | 515.13M | - | 3.84 |
| 10 | UXIN | Uxin Ltd ADR | Consumer Cyclical | Auto & Truck Dealerships | China | 467.23M | - | 2.16 |
| 11 | PLAY | Dave & Buster's Entertainment Inc | Communication Services | Entertainment | USA | 433.90M | - | 12.49 |
| 12 | CGC | Canopy Growth Corp | Healthcare | Drug Manufacturers - Specialty & Generic | Canada | 430.10M | - | 1.01 |
| 13 | WDH | Waterdrop Inc ADR | Financial | Insurance - Diversified | China | 392.97M | 6.56 | 1.40 |
| 14 | HITI | High Tide Inc | Healthcare | Pharmaceutical Retailers | Canada | 201.29M | - | 2.29 |
| 15 | QMCO | Quantum Corp | Technology | Computer Hardware | USA | 184.29M | - | 12.59 |
| 16 | DOMO | Domo Inc | Technology | Software - Application | USA | 136.12M | - | 3.02 |
| 17 | CODA | Coda Octopus Group Inc | Industrials | Aerospace & Defense | USA | 125.50M | 30.30 | 11.13 |
| 18 | VNCE | Vince Holding Corp | Consumer Cyclical | Apparel Manufacturing | USA | 56.01M | 8.97 | 4.36 |
| 19 | DAIO | Data io Corp | Technology | Electronic Components | USA | 34.85M | - | 3.71 |
| 20 | YQ | 17 Education & Technology Group Inc ADR | Consumer Defensive | Education & Training Services | China | 15.80M | - | 2.31 |

AraratBank

# Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

| TIME (ET) | REPORT | PERIOD | ACTUAL | MEDIAN FORECAST | PREVIOUS |
|---|---|---|---|---|---|
| **MONDAY, JUNE 15** | | | | | |
| 8:30 am | Empire State manufacturing survey | June | | | 19.6 |
| 9:15 am | Industrial production | May | | | 0.7% |
| 9:15 am | Capacity utilization | May | | | 76.1 |
| **TUESDAY, JUNE 16** | | | | | |
| 8:30 am | Import price index | May | | | 1.9% |
| 8:30 am | Import price index minus fuel | May | | | 0.8% |
| 8:30 am | Housing starts | May | | | 1.47 million |
| 8:30 am | Building permits | May | | | 1.44 million |
| **WEDNESDAY, JUNE 17** | | | | | |
| 8:30 am | U.S. retail sales | May | | | 0.5% |
| 8:30 am | Retail sales minus autos | May | | 0.7% | |
| 10:00 am | Pending home sales | May | | | 1.4% |
| 10:00 am | Home builder confidence index | May | | | 37 |
| 10:00 am | Business inventories | April | | | 0.9% |
| 2:00 pm | FOMC interest-rate decision | | | | |
| 2:30 pm | Fed Chair Warsh press conference | | | | |
| **THURSDAY, JUNE 18** | | | | | |
| 8:30 am | Initial jobless claims | June 13 | | | |
| 8:30 am | Philadelphia Fed manufacturing survey | June | | | -0.4% |
| **FRIDAY, JUNE 19** | | | | | |
| | Juneteenth holiday, none scheduled | | | | |

AraratBank

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am